

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

**ՂԱՏԱՐԱՆԻ՝ ՈՐՊԵՍ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ
ԵՆԹԱՐԿՈՂ ՍՈՒԲՅԵԿՏԻ ՀԻՄՆԱԳԱՐՑԵՐԸ ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ
ՂԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

ԳՈՒԷԼ ՍՈՒՂՆԵՅՅԱԼ

*ԵՊՀ սահմանադրական իրավունքի
ամբիոնի ասպիրանտ*

Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 26-րդ գլխով ամրագրված նորմերով կարգավորվում են դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հարցերը: Մեր խորին հանդգնամբ՝ ներկայումս վարչական դատարանների՝ իրավական իրականությունում իմաստավորումը և դրանց արժևորումը, վարչական դատարանի կողմից վարչական պատասխանատվության ենթարկելու ինստիտուտն անհամատեղելի են դարձնում վարչական արդարադատության կողմից իրականացվող գործառույթների հետ: Վարչական պատասխանատվությունը իրավական պատասխանատվության տեսակ է, որն ունի իրեն բնորոշ առանձնահատկությունները:

Նույնիսկ սոցիոլագիայում դատարանը ներկայացվում է որպես վեճեր լուծող սուբյեկտ, այլ ոչ թե վարչական վերահսկողություն իրականացնող մարմին, որը իրավասու է վարչական պատասխանատվության ենթարկելու¹:

Իրավաբանական գրականության մեջ իրավական պատասխանատվությունը բնորոշվում է տարբեր կերպ: Որոշ հեղինակների կարծիքով, իրավական պատասխանատվությունն իրենից ներկայացնում է մեղավոր անձի նկատմամբ իրավախախտման համար պետական հարկադրանքի միջոցների կիրառում²: Մեկ այլ խումբ գիտնականների պնդմամբ, իրավա-

կան պատասխանատվությունը հատուկ իրավական վիճակ է, որով պայմանավորված՝ իրավախախտում կատարած անձը կրում է պետական-հարկադրական բնույթի որոշակի գրկանքներ³:

Վ. Ս. Ներսիսյանցի համոզմամբ, իրավական պատասխանատվությունը խախտված նորմի սանկցիայով նախատեսված և իրավասու պետական մարմնի կամ պաշտոնատար անձի կողմից պատշաճ դատավարական-իրավական կարգով իրավախախտողի նկատմամբ կիրառվող իրավական հարկադրանքի միջոցն է⁴:

Նշված սահմանումների համադրմամբ և դրանց համակարգային վերլուծությամբ կարող ենք եզրահանգել, որ իրավական պատասխանատվությունը դիմամիկ առումով իրավախախտ անձի նկատմամբ նորմատիվ իրավական կարգով սահմանված ընթացակարգի պահպանմամբ հարկադրանքի միջոցների կիրառմանն ուղղված գործընթացն է, իսկ ստատիկ առումով՝ որոշակի տարրերի փոխկապակցված համակցություն: Նշվածից բացառություն չէ նաև վարչական պատասխանատվությունը:

Հայրենական իրավագետներից վարչական պատասխանատվության իրավական պատասխանատվության տեսակ լինելու հարցին և դրա առանձնահատկություններին բավականին մանրամասնորեն անդրադարձել է Գ. Դանիելյանը⁵:

Վարչական պատասխանատվությունը՝ որպես վարչական զանցանք կատարած անձի նկատմամբ օրենքով սահմանված կարգի պահպանմամբ հարկադրանքի միջոցների կիրառում, պետք է իրացնի հա-

մապատասխան վարչական մարմինը, որն այդ զանցանքի կապակցությամբ իրականացնում է վարչարարությունը: Որոշ իրավագետներ, անդարադառնալով վարչաիրավական հարկադրանքի առանձնահատկությունը ընդգծող հատկանիշներին, որպես այդպիսիք առանձնացնում են հարկադրանքի միջոցի կիրառումը իրավասու կառավարման մարմնի կողմից և հարկադրանքի միջոցի կիրառման ձևակերպումը կառավարման մարմնի ակտով, որը կիրառվող հարկադրանքի միջոցների օրինականության ապահովման երաշխիք է:

Նույնաբովանդակ դիրքորոշում ունեննալ հայրենական իրավագետները. մասնավորապես՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի վերաբերյալ հարցեր և պատասխաններ» աշխատության հեղինակների պնդմամբ վարչական հարկադրանքը կիրառվում է վարչական ակտով:

Այլ կերպ ասած՝ վարչական պատասխանատվության կիրառումը պետք է հանդիսանա վարչարարության՝ որպես իրավազոր գործընթացի վերջնական փուլը, որի շրջանակներում իրավասու վարչական մարմինը (այլ ոչ թե դատական մարմինը) համապատասխան հիմքերի առկայության դեպքում պետք է կայացնի միջամտող կամ զուգորդվող վարչական ակտ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 26-րդ գլխով սահմանված իրավակարգավորումը միգուցե արդարացված համարվեր, եթե հնարավոր լիներ պաշտոնատար անձանց ենթարկել վարչական պատասխանատվության ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձանց դիմումների հիման վրա, սակայն այս դեպքում մենք ստիպված էինք լինելու վարչական պատասխանատվությանը հաղորդելու նոր որակական հատկանիշներ, ինչը միանշանակ հանգեցնելու էր վերջինիս բովանդակային և այդ երևույթի ընկալման փոփոխությանը:

Հարկ է նշել, որ վարչադատաիրավակիրառական պրակտիկայում՝ պաշտոնա-

տար անձանց ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձանց դիմումների հիման վրա վարչական պատասխանատվության ենթարկելու հարցի վերաբերյալ առկա են հակասական մտեցումներ: Մասնավորապես՝ ՀՀ վարչական դատարանը (երեք դատավորի կազմով), ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ գլխով սահմանված կարգով քննության առարկա դարձնելով ՀՀ վարչական դատարանի՝ հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշման դեմ ներկայացված բողոքը, իր 2009 թվականի ապրիլի 24-ի թիվ ՎԴ/0074/08/09 որոշմամբ արձանագրել է, որ դատարանը պետք է վարույթ ընդուներ և քններ անձի՝ պաշտոնատար անձին վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջի մասին հայցադիմումը:

Սակայն մեկ այլ գործով ՀՀ վարչական դատարանը (նույնպես երեք դատավորի կազմով), քննելով նույնանման փաստական և իրավական հիմքերով հայցադիմումի ընդունումը մերժելու որոշման դեմ ներկայացված բողոքը, հանգել է այն եզրակացության, որ վարչական դատարանի իրավասությունից դուրս է ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձանց դիմումների հիման վրա պաշտոնատար անձանց վարչական պատասխանատվության ենթարկելու հետ կապված վեճերի քննությունը¹⁰:

Մեկ այլ դեպքում ՀՀ վարչական դատարանը պաշտոնատար անձին վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջի մասին հայցադիմումը ընդունել է վարույթ՝ գտնելով, որ այդ վեճերը նույնպես հանրային իրավական վեճեր են և ենթակա են վարչական դատարանի քննությանը¹¹:

Մեր կարծիքով, այս հակասական մտեցումները և դրանից բխող իրավական հետևանքները կանխելու և վարչական պատասխանատվության և վարչադատական կարգով իրավունքների պաշտպանության իրավական ինստիտուտները միմյանց հետ չչփոթելու նկատառումով ՀՀ սահմանադրական դատարանը, իր 2010

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

թվականի փետրվարի 5-ի ՍԴՈ 864 որոշմամբ¹² վարչական պատասխանատվության ինստիտուտը գնահատելով դրա նպատակի, վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով նախատեսված ողջ իրավակարգավորման հիմքում ընկած տրամաբանության, «անձի խախտված իրավունքների վերականգնում» հասկացության բովանդակության համատեքստում արդարացիորեն եզրահանգել է, որ անձի իրավունքները խախտած պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի պաշտոնատար անձին դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելը անձի իրավունքի դատական պաշտպանության բաղադրատարր չէ, և վարչական պատասխանատվության միջոց հանդիսացող վարչական տույժը՝ մասնավորապես, հետապնդում է այլ նպատակ, քան անձի խախտված իրավունքի դատական կարգով վերականգնումն է:

Նշված որոշմամբ վարչական պատասխանատվության իրավական ինստիտուտը գնահատման առարկա դարձնելով իրավական կարգավորման կառուցակարգում հետապնդած անմիջական նպատակի առումով (տելոլոգիական ասպեկտ)՝ ՀՀ սահմանդրական դատարանը հանգել է այն եզրակացությանը, որ վարչական պատասխանատվության նպատակն առավելապես կրում է հանրային բնույթ, իրավախախտ անձը պատասխանատվություն է կրում հասարակության, այլ ոչ թե մասնավոր անձի առջև, վարչական պատասխանատվությունն առնչվում է ոչ այնքան մասնավոր, որքան հանրային շահերին: Իսկ հանրային իրավահարաբերությունների ոլորտում մասնավոր շահերի պաշտպանության նպատակով սահմանված է այլ կարգ՝ հաշվի առնելով վարչադատավարական իրավահարաբերությունների առանձնահատկությունները, վարչաիրավական հարաբերությունների հետևանքով

խախտված իրավունքների վերականգնման կարգի առանձնահատկությունները, խախտված իրավունքների փաստացի վերականգնելիության հնարավորությունն ու աստիճանը:

Վարչական պատասխանատվության՝ վարչարարության (որպես հանրային իրավագոր գործընթացի) եզրափակիչ փուլը լինելու հանգամանքն իրավական ամրագրման է ենթարկված նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով¹³: Սենք նման եզրահանգման ենք գալիս նշված օրենքի 20-րդ հոդվածով, 5-7-րդ գլուխներով ամրագրված նորմերի համակարգային վերլուծությամբ¹⁴:

Մեր խորին համոզմամբ դատարանների՝ վարչական պատասխանատվության ենթարկող սուբյեկտ չլինելու հանգամանքը պայմանավորված է վարչական իրավունքի, դատարանների դերի և դրանց նշանակության նորովի արժևորմամբ և վերախմաստավորմամբ, որոնց պարագայում դատարանները արդեն չեն դիտվում որպես վարչական պատասխանատվության ենթարկող սուբյեկտներ, այլ որպես անձանց հանրային սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության նկատառումով օրենքով սահմանված հիմքերով և կարգով դատական վերահսկողություն իրականացնող սուբյեկտներ: Սակայն նշված հանգամանքը միանշանակ չի ընդունվում: Որոշ գիտնականներ, ամբողջական գիտական աշխատանքներում ուսումնասիրության առարկա դարձնելով վարչական պատասխանատվության ենթարկող սուբյեկտների հետ կապված հարցերը, վարչական պատասխանատվության ենթարկող սուբյեկտների շարքում հատկապես առանձնացնում են դատարանները¹⁵:

Դատարանի՝ վարչական պատասխանատվության ենթարկող սուբյեկտ չլինելու հանգամանքն անուղղակիորեն իրավական կարգավորման է ենթարկված նաև վարչական իրավագոր գործունեության կարգավորմանն ուղղված «Վարչարարու-

յան հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով: Նշված օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված նորմի համաձայն՝ **վարչարարությունը վարչական մարմինների արտաքին ներգործությունն ունեցող գործունեությունն է, որը եզրավակվում է վարչական կամ նորմատիվ ակտերի ընդունմամբ, ինչպես նաև գործողություն կամ անգործություն, որն անձանց համար առաջացնում է փաստական հետևանքներ:**

Նույն հոդվածի 1-ին մասով ամրագրված իրավասահմանող (դեֆինիտիվ) իրավանորմերով ամրագրված են վարչական մարմինների շրջանակը, որտեղ իրավացիորեն դատարանը որպես վարչական մարմին նախատեսված չէ:

Վարչական դատարանի՝ վարչական պատասխանատվության ենթարկող սուբյեկտ չլինելու հարցի կապակցությամբ մեզ համար ընդունելի է Բ. Ղազիյանի ատենախոսության մեջ տեղ գտած դիրքորոշումը, համաձայն որի՝ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու ինստիտուտի կիրառումը որևէ առնչություն չունի վարչական արդարադատության նպատակի հետ¹⁶:

Համաշխարհային իրավական փորձը և պրակտիկան նույնպես վկայում են, որ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու ինստիտուտը բացակայում է, կամ նկատվում է դրանից հրաժարվելու միտում: Նշված հանգամանքն ուղղակիորեն ամրագրված է նաև ՀՀ սահմանադրական դատարանի 2010 թվականի փետրվարի 5-ի ՍԴՈ 864 որոշմամբ¹⁷:

Մեր կողմից ուսումնասիրության առարկա դարձած մի շարք երկրների վարչադատավարական գործընթացը կարգավորող նորմատիվ իրավական ակտերի («Վարչադատական գործընթացի մասին» Գերմանիայի Դաշնային օրենք, Ուկրաինայի վարչական դատավարության օրնագիրը¹⁸, «Վարչական դատարանի մասին» Մոլդովայի օրենք¹⁹, Էստոնիայի Վարչական դատարանի ընթացակարգի օրնագիրը²⁰,

Թուրքիայի «Շրջանային վարչական դատարանների, վարչական և հարկային դատարանների հաստատման և գործունեության մասին» 06.01.1982թ. թիվ 2576 և «Պետական խորհրդի մասին» 06.01.1982թ. թիվ 2575 օրենքներ²¹, Վրաստանի վարչական դատարանի ընթացակարգի օրենսգիրք, Չեխիայի վարչական արդարադատության օրենսգիրք²²) համակարգային և համեմատական վերլուծությունը փաստում է, որ դրանցում դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հետ կապված իրավակարգավորումներ առկա չեն:

Հայաստանի Հանրապետությունում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 26-րդ գլխով սահմանված ինստիտուտի առկայությունը, ըստ էության, պայմանավորված է այն հանգամանքով, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում (այսուհետ՝ ՎԻՎՕ) դեռևս սահմանված է որոշակի իրավակարգավորում, համաձայն որի՝ առանձին վարչական իրավախախտումների համար պատասխանատվության ենթարկող սուբյեկտ է հանդիսանում դատարանը: Մասնավորապես՝ նշված օրենսգրքի 223-րդ հոդվածով հղում է արված այն հոդվածներին (ՎԻՎՕ-ի 40¹-40⁷, 44, 53, 53¹, 97², 97³, 104³, 147, 166¹, 170⁵, 172 հոդվածներով, 175 հոդվածի երրորդ մասով և 180¹, 182, 183¹, 185, 189², 189³, 189⁴, 189⁵, 189⁶, 189⁷, 189⁸, 189⁹, 189¹⁰ և 198² հոդվածի չորրորդ ու հինգերորդ մասերով, 206¹, 206², 206³, 206⁴, 206⁵, 206⁶ և 206⁷, 206⁸ հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումներ), որոնց համար վարչական պատասխանատվության ենթարկող սուբյեկտ է համարվում դատարանը:

Հարկ ենք համարում նշել, որ որևէ կերպ հիմնավորված չէ այն հանգամանքը, թե ինչու հենց ՎԻՎՕ-ի 223-րդ հոդվածով հղում կատարված հոդվածներով սահմանված արարքները կատարելու համար է նախատեսված վարչական պատասխանատվության կիրառումը դատարանների կողմից: Այլ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

կերպ ասած՝ ներկայիս իրավական իրականությունում բացակայում են այն գիտատեսական հիմքերը և հիմնավորումները, որոնց վրա խարսխված կլինեն 4140-ի 223-րդ հոդվածով սահմանված տարբերակված իրավակարգավորման անհրաժեշտությունը: 4140-ի 223-րդ հոդվածով սահմանված հղումների մասով արդարացիորեն կարող են ծագել որոշակի հարցեր՝ թե ինչու մի դեպքում վերահսկողություն իրականացնող հանրային իշխանական լիազորություններով օժտված պետական մարմինը կարող է իրավախախտ անձին ենթարկել վարչական պատասխանատվության՝ իրավախախտի նկատմամբ կիրառելով վարչական հարկադրանքի միջոցներ, մյուս դեպքում՝ վերահսկողություն իրականացնող սուբյեկտը պետք է բավարարվի միայն վարչական իրավախախտման վերաբերյալ վարչական վարույթի հարուցմամբ, դրա քննություն իրականացնելով և արձանագրություն կազմելով՝ առանց վարչական պատասխանատվության ենթարկելու հնարավորության:

Մեր կարծիքով, 4140-ի 223-րդ հոդվածի, հետևաբար դրանով սահմանված իրավակարգավորման առկայությունը պայմանավորված է այն իրողությամբ, որ այն սահմանվել է ՀԽՍՀ-ի օրոք, և այդ հոդվածի գործողության դադարեցված չլինելը օրենսդրի ոչ հետևողական գործունեության արդյունք է: 4140-ի նշված հոդվածով ամրագրված դրույթներն այլևս առարկայազուրկ են, քանի որ դրանցով սահմանված իրավակարգավորումը անհամատեղելի է ՀՀ-ում տեղի ունեցող հանրային-իրավական գործընթացների դինամիկ զարգացման հետ²⁹:

Ինչևէ, ՀՀ-ում կան պետական մարմիններ (օրինակ՝ ՀՀ ԿԳՆ Լեզվի պետական տեսչություն), որոնց կարգավիճակը սահմանող իրավական ակտերը վերջիններիս հնարավորություն չեն տալիս վարչական

իրավախախտում կատարած անձանց ենթարկել վարչական պատասխանատվության: Մեր պնդմամբ նշված պետաիշխանական սուբյեկտներին կամ համապատասխանաբար նրանց վերադաս պետական մարմինն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պետք է հնարավորություն ընձեռվի վարչական իրավախախտում թույլ տված անձանց նկատմամբ կիրառել վարչական հարկադրանքի միջոցներ:

Մեր խորին համոզմամբ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 26-րդ գլխով սահմանված ինստիտուտի անարդյունավետությունը պայմանավորված է նաև նրանով, որ այդ դրույթները կարող են կիրառվել առանց հանրային-իրավական վեճի առկայության: Հնարավոր են դեպքեր, երբ համապատասխան պետական մարմինը վարչարարությունն իրականացրած լինի առանց օրենքի խախտման, և անձը, ով պետք է դատական կարգով ենթարկվի վարչական պատասխանատվության, համաձայնի վարչական իրավախախտումների վերաբերյալ կազմված արձանագրության մեջ տեղ գտած խախտումների հետ, ինչը կնշանակի, որ կողմերի միջև վեճը բացակայում է:

Նման պարագայում ՀՀ վարչական դատարանը, չիրացնելով իր իրավագոր գործառույթները, կայացնելու է դատական ակտ մի գործով, որով բացակայում է վեճը: Սա միանշանակ ունի իր բացասական հետևանքները, մասնավորապես՝ այդ ամենը հանգեցնում է պետական ռեսուրսների անհարկի վատնման (ծանրաբեռնում է վարչական մարմիններին, վարչական դատարանը, վարչական դատարանի գործունեությանը օժանդակող դատական ծառայողներին, պահանջում է լրացուցիչ ծախսեր, որոնցից կարելի է խուսափել):

Որոշ իրավաբանների պնդմամբ առանձին խումբ սուբյեկտներին միայն դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հարցում առկա է սահմանադրաիրավական պահանջ: Վերջիններիս հավաստմամբ ՀՀ Սահմանադր-

րությանը (66-րդ հոդվածի 3-րդ մաս, 97-րդ հոդվածի 3-րդ մաս) անրագրված է, որ ԱԺ պատգամավորներին, դատավորներին, ինչպես նաև ՀՀ սահմանադրական դատարանի անդամներին վարչական պատասխանատվության կարելի է ենթարկել միայն դատական կարգով:

Մեր խորին համոզմամբ ՀՀ Սահմանադրության 66-րդ հոդվածի 3-րդ մասով, ինչպես նաև 97-րդ հոդվածի 3-րդ մասով ամրագրված նորմերը պարտադիր պահանջ են սահմանում առ այն, որ ԱԺ պատգամավորները, դատավորները, ինչպես նաև ՀՀ սահմանադրական դատարանի անդամները վարչական պատասխանատվության կարող են ենթարկվել միմիայն դատական կարգով:

ՀՀ Սահմանադրության 66-րդ հոդվածի 3-րդ մասով ամրագրված նորմի համաձայն՝ պատգամավորին չի կարելի որպես մեղադրալ ներգրավել, կալանավորել կամ նրա նկատմամբ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հարց հարուցել՝ առանց Ազգային ժողովի համաձայնության:

ՀՀ Սահմանադրության 97-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված նորմի համաձայն՝ դատավորը և սահմանադրական դատարանի անդամը չեն կարող կալանավոր-

վել, ներգրավվել որպես մեղադրալ, ինչպես նաև նրանց նկատմամբ չի կարող դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հարց հարուցել՝ առանց համապատասխանաբար արդարադատության խորհրդի կամ սահմանադրական դատարանի համաձայնության:

Նշված նորմերի տառացի մեկնաբանության արդյունքում մենք հանգում ենք այն եզրակացությանը, որ այդ նորմերով վերոգրյալ անձանց դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու գործընթացը կարող է սկսվել միայն որոշակի իրավաբանական փաստի, այն է՝ ԱԺ-ի, ՀՀ արդարադատության խորհրդի, ՀՀ սահմանադրական դատարանի համաձայնության առկայության պարագայում: Սակայն, եթե ընթացիկ օրենսդրությամբ դատական կարգով վարչական պատասխանատվության ինստիտուտն իրավական ամրագրում չստանա, ապա այդ դեպքում հանրային իշխանական կարգավիճակով օժտված վերոնշյալ սուբյեկտները կենթարկվեն վարչական պատասխանատվության առանց համապատասխան համաձայնության, այսինքն՝ ընդհանուր կարգով:

⁹ Այս ակտերի հասկացությունը տրված է «Վարչարարության հիմունքների և վարչական վա-

¹ Տե՛ս Ֆրիդրիխ Ավգուստ ֆոն Հայեկ. *Право, закон и свобода, современное понимание либеральных принципов справедливости и политики*; пер. с англ. Б. Пинскера и А. Кутарева.- М.: ИРИСЭН, 2006, էջ 120:
² Տե՛ս, օրինակ, Алексеев С. С. *Право. Азбука. Теория. Философия. Опыт комплексного исследования*. М., 1998. էջ 83:
³ Տե՛ս, օրինակ, Абдулаев М.И. *Теория государства и права: Учебник для высших учебных заведений*. М.: Финансовый контроль, 2004, էջ 321:
⁴ Տե՛ս Ներսիսյանց Վ. Ս., Իրավունքի և պետության տեսություն, Երևան, 2001, էջ 285: Իրավական պատասխանատվության հասկացության, տեսակների, դրանց առանձնահատկությունների վերաբերյալ ավելի մանրամասն տե՛ս Духно Н.А. Ивакин В.И. *Понятие и виды юридической ответственности* //

Государство и право. N 6, 2000, էջ 12-17:
⁵ Տե՛ս Դանիելյան Գ., Վարչական պատասխանատվությունը Հայաստանի Հանրապետությունում, Եր: ԱՌՏ, 2007, էջ 78-83:
⁶ Վարչական պատասխանատվության դիմամիկ և ստատիկ ասպեկտների, վարչական պատասխանատվության ենթարկող սուբյեկտի վերաբերյալ ավելի մանրամասն տե՛ս, օրինակ, Бельский К.С., *Административная ответственность: генезис, основные признаки, структура* // Государство и право. N 9, 1999, էջ 15-16, 19:
⁷ Տե՛ս Жумагулов М.И., *О сущности и понятии административно-правового принуждения* // Государство и право. N 10, 2006, էջ 26:
⁸ Տե՛ս «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի վերաբերյալ հարցեր և պատասխաններ, Երևան, 2007, էջ 153:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

- րույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 2-րդ մասով: Տե՛ս ՀՀՊՏ 2004.03.31/18 (317), հոդ. 413:
- ¹⁰ Տե՛ս ՀՀ վարչական դատարանի 2009 թվականի մարտի 23-ի թիվ ՎԴ/6279/05/08 վճիռը:
- ¹¹ Տե՛ս ՀՀ վարչական դատարանի 2009 թվականի մայիսի 11-ի թիվ ՎԴ/1696/05/09 վճիռը:
- ¹² <http://www.concourt.am/armenian/decisions/common/2010/pdf/sdv-864.pdf> կայքի 01.09.2010թ. դրությամբ:
- ¹³ Տե՛ս ՀՀՊՏ 2004/18 (317), 31.0304 հոդ. 413:
- ¹⁴ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի, 5-7-րդ գլուխների դրույթներով կարգավորվում են վարչարարության՝ որպես իրավագործ գործընթացի հարուցման ընթացիկ և եզրափակիչ փուլերը: Հարկ ենք համարում նշել, որ սույն հոդվածի շրջանակներում վարչական պատասխանատվությունը՝ որպես վարչարարության վերջնական փուլ, ուսումնասիրության առարկա է դարձվում և վերաբերելի է միմիայն այն դեպքերին, երբ վարչարարությունն ավարտվում է միջամտող կամ զուգորդվող վարչական ակտի ընդունմամբ:
- ¹⁵ Տե՛ս, օրինակ, Якимов А.Ю. Статус субъекта административной юрисдикции и проблемы его реализации, М.: Проспект, 1999, էջ 81-86:
- ¹⁶ Տե՛ս Ղազինյան Բ., Գործադիր իշխանության սահմանադրաիրավական կարգավիճակը Հայաստանի Հանրապետությունում // Իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան, 2010, էջ 159:
- ¹⁷ <http://www.concourt.am/armenian/decisions/common/2010/pdf/sdv-864.pdf> կայքի 01.09.2010թ. դրությամբ:
- ¹⁸ Նշված իրավական ակտի ամբողջական տեքստին կարել է ծանոթանալ համացանցի www.audiozakon.com.ua կայքում (հղումը 01.07.2010թ. դրությամբ):
- ¹⁹ Նշված իրավական ակտի ամբողջական տեքստին կարել է ծանոթանալ համացանցի http://gov.gov.md/www.gov.md/file/cadrul_juridic/ru/Закон_об_административ_ном_суде.pdf կայքում (հղումը 01.07.2010թ. դրությամբ):
- ²⁰ Նշված իրավական ակտի ամբողջական տեքստին կարել է ծանոթանալ համացանցի <http://www.legaltext.ee/en/andmebaas/tekst.as> [p?loc=text&dok= X30054K 8&keel=en&pg=1&ptyyp=RT&tyyp =X&query=+Court](http://www.legaltext.ee/en/andmebaas/tekst.as) կայքում (հղումը 01.07.2010թ. դրությամբ):
- ²¹ Նշված իրավական ակտերի ամբողջական տեքստին կարել է ծանոթանալ համացանցի <http://www.danistay.gov.tr/eng/index.html> և http://www.legalisplatform.net/hukuk_metinleri/2575%20Nr.%20Code.pdf կայքերում (հղումը 01.07.2010թ. դրությամբ):
- ²² Նշված իրավական ակտերի ամբողջական տեքստին կարել է ծանոթանալ համացանցի <http://www.nssoud.cz/docs/caj2002.pdf> կայքում (հղումը 10.09.2010թ. դրությամբ):
- ²³ ՎԻՎՕ-ի 223-րդ հոդվածով սահմանված դրույթի ոչ կենսունակ լինելու համագամանքը հիմնավորվում է նաև նրանով, որ այդ նորմի կատարումն անընդունելի է, իսկ որոշ դեպքերում՝ նույնիսկ անհնարին: Մասնավորապես՝ դրանում հղում կատարված մի շարք հոդվածներ ուժը կորցրել են. ՎԻՎՕ-ի 44-րդ հոդվածը ուժը կորցրել է 24.12.2004թ. ՀՕ-68-Ն օրենքով, 104.3-րդ հոդվածը՝ 14.12.2004թ. ՀՕ-37-Ն օրենքով, 53.1-րդ, 172-րդ, 206.1, 206.6-206.7-րդ հոդվածները՝ 16.12.2005թ. ՀՕ-32-Ն օրենքով: «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 3-րդ մասով ամրագրված է իմպերատիվ դրույթ, համաձայն որի՝ *նորմատիվ իրավական ակտերում չպետք է կիրառվեն նորմեր, որոնց կատարումն անհնար է կամ անընդունելի, կամ որոնց չկատարման համար իրավական հետևանքներ նախատեսված չեն*: ՎԻՎՕ-ի 223-րդ հոդվածով սահմանված դրույթի կատարման անհնարինության (ոչ կենսունակ լինելու) փաստը հավաստվում է նաև ՀՀ դատական դեպարտամենտի դատական պրակտիկայի ամփոփման վարչության տրամադրած տվյալներով, մասնավորապես՝ 2008 թվականի հունվարի 1-ից մինչև 2010 թվականի առաջին կիսամյակն ընկած ժամանակահատվածում դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ քննվել է թվով 192 գործ, որոնք ՎԻՎՕ-ի 223-րդ հոդվածով սահմանված 40 հղումներից վերաբերում են ընդամենը երեք հոդվածներով սահմանված արարքների՝ ՎԻՎՕ-ի 53-րդ, 182-րդ, 189³-րդ հոդվածներով սահմանված արարքներ:

THE PROBLEM OF THE COURT AS AN ADMINISTRATIVE CHARGE IMPOSING INSTITUTION IN ADMINISTRATIVE PROCEDURE OF RA

Gnel MUGHNETSYAN

Postgraduate student of Constitutional law department, Faculty of Law ,YSU

This article discusses the problem of the court as an administrative charge imposing institution in administrative procedure of RA.

It is asserted, that currently the appreciation and the perception of the administrative courts in legal reality, the institution of imposing administrative charge by administrative courts is inconsistent with the functions of the administrative justice.

The imposing of the administrative

charge is the final part of the administration as a legally qualified procedure, within the bounds of which the authorised administrative body (not the court) should make interposing and accompanied decisions in case of appropriate causes.

An attempt has been made to assert the nonviability of the legal regulation set up by the article 223 of the Code of Administrative Violations. In order to examine the problem thoroughly some legal acts of both Administrative court and the Constitutional court of RA, as well as some normative legal acts regulating administrative procedures in some other countries have been studied.
